ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ներկայ մեծ տօներն առանձին քաղցր նշանակութիւն են ստանում Թիֆլիսի հայ ժողովրդի համար, որովհետև նա տօնում է իւր սիրելաւ ՀԱՅՐԻԿԻ հետ միասին և անշուշտ ժողովուրդը կզգայ այն հոգեկան երջանկութիւնը, ինչ որ զգում է իւրաքանչիւր զաւակ այս նուիրական օրերին, երբ թաթախուելուց առաջ ներմ համբոյրով մերձենում է իւր ծնողի աչին:

Երջանիկ է „Լուսոյ"-ի խմբագրութիւնը, որ նոյն զգացմունքները տածելով, ինչ որ ամեն մի հարազատ զաւակ, բաղտ ունի ներկայ համարը ձօնել Հայոց սիրելի Հայրիկին:

Ազգիս Վեհափառ և Սրբազնագոյն Հայրապետ **Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.** ամսոյս 24-ին մեկնելով ս. Էջմիածնից՝ հաճեց ժամանել Տփխիս՝ դեկտեմբերի 30-ին, երեկոյեան 7 ժ. 10 րոպէին։

Նորին Օծութեան ուղեկցում էին իւր դիւանապետ բարձր. Կորիւն վարդապետը և սովորական շքախումբը մինչեւ Թիֆլիս, իսկ մինչեւ Դիլիջան՝ Երեւանի փոխ թեմական Գեր. Տ. Ներսէս Արքեպիսկոպոսը եւ երկու վարդապետ։ Թիֆլիսից դիմաւորելու ընդառաջել էին մինչեւ Դիլիջան, թէսիս Առաջնորդ Գեր. Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանը և մինչև Աղստև—Հայ հոգևորականներ, նշանաւոր հայազգիք և տեղական հայ և ռուս մամուլի ներկայացուցիչներ։